**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան 11.02.2022թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2022/16

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Դ. Հակոբյանի, Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, ՀԱԷԿ-ի վթարային էլեկտրամատակարարման համակարգի դիզել գեներատորային կայանքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.01.2022թ.-ի թիվ 26/26-1/573-2022 գրությամբ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## ՊԱՐԶԵՑ

### 1. <u>Գործի նախապատմությունը</u>.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 05.01.2022թ.-ի թիվ Ե/40/22-22 գրության հիման վրա, 13.01.2022թ.-ին «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 13.01.2022թ.-ին:

14.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2022/16 համարի ծածկագիրը:

25.01.2022թ.-ին և 11.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.02.2022թ.-ին:

### 2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 05.01.2022թ.-ի թիվ Ե/40/22-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

*««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) «ՀԱԷԿ-ի վթարային էլեկտրամատակարարման համակարգի դիզել գեներատորային կայանքի» ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-*

*24/21» ծածկագրով գնման ընթացակարգը, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էկրա Կովկաս» ՍՊ ընկերությունը: Հետադարձ աճուրդից հետո պարզվել է, որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի գնային առաջարկը նվազագույնն է (որը ցածր է նաև սույն գնումը կատարելու համար նախատեսված սահմանաչափից) և e-auction համակարգի կողմից ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:*

*Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ից ստացվել են գրություններ (թիվ 154 առ 22.12.2021թ. և թիվ 159 առ 28.12.2021թ.) առ այն, որ իրենց կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է վրիպակ: Իրական գնային առաջարկն է 22,485,000,000.0 (քսաներկու միլիարդ չորս հարյուր ութսունհինգ միլիոն) ՀՀ դրամ առանց ԱԱՀ, սակայն e-auction համակարգում նշվել է 22,485,000.0 (քսաներկու միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ առանց ԱԱՀ:*

*«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն թիվ 159 առ 28.12.2021թ. գրությամբ տեղեկացրել է, որ հրաժարվում է կնքել պայմանագիր 22,485,000.0 (քսաներկու միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ արժողությամբ:*

*«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, հիմք ընդունելով «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի թիվ 159 առ 28.12.2021թ. գրությունը (կատարված գնային առաջարկից և պայմանագիր կնքելուց հրաժարվելը), գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 45-րդ կետի համաձայն Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումն հիմնավորող փաստաթղթերը:»:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ ընթացակարգի մասնակից՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն 04.02.2022թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Հայկական ատոմային էլեկտրական» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) գրավոր դիրքորոշումը կապված ՍՑ-ԼՕ-2022/16 ընթացակարգի շրջանակներում «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշման հետ:*

*«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ՀԱԷԿ-ի վթարային էլեկտրամատակարարման համակարգի դիզել գեներատորային կայանքի ձեռք բերման նպատակով հրապարակված ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/21 ծածկագրով գնման ընթացակարգի հետադարձ աճուրդից հետո պարզվել է, որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի գնային առաջարկը նվազագույնն է (որը ցածր է նաև սույն գնումը կատարելու համար նախատեսված սահմանաչափից) և e-auction համակարգի կողմից ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:*

*Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ից ստացվել են գրություններ (թիվ 154 առ 22.12.2021թ. և թիվ 159 առ 28.12.2021թ.) առ այն, որ իրենց կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է վրիպակ: Իրական գնային առաջարկն է 22,485,000,000.0 (քսաներկու միլիարդ չորս հարյուր ութսունհինգ միլիոն) ՀՀ դրամ առանց ԱԱՀ, սակայն e-auction համակարգում նշվել է 22,485,000.0 (քսաներկու միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ առանց ԱԱՀ:*

*«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն թիվ 159 առ 28.12.2021թ. գրությամբ տեղեկացրել է, որ հրաժարվում է կնքել պայմանագիր 22,485,000.0 (քսաներկու միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ արժողությամբ:*

*«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, հիմք ընդունելով «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի թիվ 159 առ 28.12.2021թ. գրությունը (կատարված գնային առաջարկից և պայմանագիր կնքելուց հրաժարվելը), գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած:*

*«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն իր դիրքորոշման մեջ նշել է, որ իր հայտը մերժվել է համաձայն 22.12.2021թ. թիվ 154 գրության հիման վրա՝ ինչը չի համապատասխանում իրականությանը:*

*Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է իրենց կողմից ստացված 28.12.2021թ. թիվ 159 գրության հիման վրա, որտեղ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն նշում է «Խնդրում ենք ընդունել մեր իրական գնառաջարկը 22,485,000,000 (քսաներկու միլիարդ չորս հարյուր ութսունհինգ միլիոն) ՀՀ դրամ: Այդ իսկ պատճառով մենք ավտոմատ կերպով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու պարագայում ստիպված ենք հրաժարվել պայմանագիր կնդելուց»:*

*Գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ. թիվ 3 արձանագրության 7-րդ կետում նշվել է, որ «Առաջին տեղ զբաղեցրած «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն 28.12.2021թ. թիվ 159 գրությամբ տեղեկացրել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին, որ իր գնային առաջարկում առկա է սխալ (22,485,000,000.0 փոխարեն նշվել է 22,485,000.0 ՀՀ դրամ), ինչի հետ կապված հրաժարվում է պայմանագիր կնքելուց: Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի գրությունը (որով ընկերությունը փաստացի հրաժարվում է իր գնային առաջարկից) և չնայած այն հանգամանքին, որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի մասնակցության հայտը գնահատվել է բավարար (հետևաբար համարվում է նաև ընտրված մասնակից), ընդունեց «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից կատարված հրաժարումը պայմանագիր կնքելու վերաբերյալ»:»:*

**3. <u>«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 04.01.2022թ.-ին գրությամբ դիմել է «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2022թ.-ի թիվ 26/26-1/573-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն 31.01.2022թ.-ին ներկայցված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*««Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/21 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Մրցույթ):*

*Մրցույթի գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3.1 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար:*

*«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը էլեկտրոնային աճուրդի թերի աշխատանքի արդյունքում 22.485.000.000 փոխարեն ստացվել է 22.485.000 ՀՀ դրամ:*

*Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետի համաձայն համաձայն՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված գրությունը:*

*ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.*

*1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.*

*2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.*

*3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:*

*Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝*

*ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ¬ցության դադարեցմանը:*

*Ինչպես արդեն հայտնել ենք, «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն մասնակցել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/21 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին:*

*Մրցույթի գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3.1 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար, սակայն՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված*

*գնային առաջարկը 22.485.000.000 փոխարեն ստացվել է 22.485.000 ՀՀ դրամ /էլ. աճուրդի համակարգի թերի աշխատանքի արդյունքում/:*

*Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետի համաձայն համաձայն՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված գրությունը:*

*Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա, այն է՝*

*Աճուրդը մեկնարկվել է 22.485.000 ՀՀ դրամ մեկնարկային գնից, որը սակայն պետք է լիներ 22.485.000.000 ՀՀ դրամ, քանի որ աճուրդի համակարգում ի սկզբանե որպես «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկ ներկայացվել է 22.485.000.000 ՀՀ դրամ:*

*Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, որ համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով ստացվել է մեկնարկային անիրական գին 22.485.000 ՀՀ դրամ և որ այլևս անհնար է եղել ներկայացնել նոր գնային առաջարկի քայլ՝ էլեկտրոնային աճուրդի համակարգում:*

*Վերը նշված խնդրի վերաբերյալ անհապաղ տեղյակ ենք պահել, թե ՀՀ ֆինանսների նախարարությանը և թե միաժամանակ նաև «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին /գրությունները կցվում են/:*

*Հատկանշական է նաև այն փաստը, որ գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետի համաձայն համաձայն՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով մասնակցի կողմից 22.12.2022թ. ներկայացված գրությունը, սակայն վերը նշված գրությամբ /եղել են երկուսը, կցվում են/ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն միայն հայտնել է Պատվիրատուին առաջացած տեխնիկական խնդրի մասին և որևէ խոսք անգամ չի եղել Ընթացակարգից հետագա մասնակցությունից հրաժարվելու մասին:*

*Գտնում ենք, որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանին ուղղված 22.12.2022թ. և 28.12.2021թ. գրությունները չեն հանդիսացել հայտից հրաժարվելու կամ պայմանագիր կնքելուց հրաժարվելու դիմում: Վերոհիշյալ գրություններով ՍՊԸ-ն ընդամենը ներկայացրել է համակարգում առաջացած տեխնիկական խնդրի և դրա հետևանքով առաջացած իրավիճակի մասին և խնդրել ընդունել «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվելիք իրական գինը, իսկ հակառակ*

*դեպքում չուղարկել ընկերության տվյալները՝ «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու համար: Գտնում ենք, որ վերոհիշյալ բովանդակություններով գրությունները չեն հանդիսացել հայտից կամ պայմանագրից հրաժարվելու դիմում:*

*Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին չվերագրել «Գմումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:*

**4. <u>ՍՑ-LO-2022/16 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ՀԱԷԿ-ի վթարային էլեկտրամատակարարման համակարգի դիզել գեներատորային կայանքի ձեռքբերման նպատակով 18.11.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Աճուրդ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն:

iii. «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.01.2022թ.-ին կայացված նիստի թիվ 3.1 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն:

v. Նույն արձանագրության համաձայն՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն 28.12.2021թ.-ին թիվ 159 գրությամբ դիմել է Պատվիրատուին և տեղեկացրել է, որ վերջինիս գնային առաջարկում առկա է սխալ, ինչի հետ կապված հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

**5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2022թ.-ի թիվ 26/26-1/573-2022 գրությամբ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ՀԱԷԿ-ի վթարային էլեկտրամատակարարման համակարգի դիզել գեներատորային կայանքի ձեռքբերման նպատակով 18.11.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ.-ին կայացված նիստի թիվ 3.1 արձանագրությամբ արձանագրվել է, որ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն: Միաժամանակ նույն արձանագրության համաձայն՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն 28.12.2021թ.-ին թիվ 159 գրությամբ դիմել է Պատվիրատուին և տեղեկացրել է, որ վերջինիս գնային առաջարկում առկա է սխալ, որով վերջինս փաստացի հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն, Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո հրաժարվելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2022թ.-ի թիվ 26/26-1/573-2022 գրությամբ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/16 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**